Արձանագրություն N 2

ԾՔ-ԳՀԾՁԲ-18/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար բակային տարածքների կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Ծաղկաձոր 26 սեպտեմբերի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ.Հայրապետյան/ԳԱՊ/

անդամներ՝ Վ.Հայրապետյան /ԲԱ /

Լ.Խաչատրյան /ԲԱ/

Է.Հովհաննիսյան /ԳԱ/

Ա.Արշակյան /ԳԱ /

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Տեղեկություններ ԾՔ-ԳՀԾՁԲ-18/18 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. ԾՔ-ԳՀԾՁԲ-18/18 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Գ.Հայրապետյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	<<ԹԵՐՄՈՇԻՆԹԵԼ>> ՍՊԸ
2	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ

3.1 <<Թերմոշինթել>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փաթեթում կցված չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	**Հայտի գնահատականը**
<<Թերմոշինթել>> ՍՊԸ	Բավարար
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	Անբավարար

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ.Հայրապետյան)

4.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Չափաբաժին	**Մասնակցի անվանումը**	**Նախահաշվային գինը**	**Առաջարկված գինը առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Առաջարկված գինը**
1.«**Ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ** N1»	<<Թերմոշինթել>> ՍՊԸ	320000	180000 /մեկ հարյուր ութսուն հազար/	0 /զրո/	180000 /մեկ հարյուր ութսուն հազար/

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ԾՔ-ԳՀԾՁԲ-18/18>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<Թերմոշինթել>> ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված, հրավերի պահանջներին համապատասխանող մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հայրապետյան)

6.1 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ 26.09.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարկելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6.1 կետում նշված հարցման պատասխանի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ----------Գ.Հայրապետյան
անդամներ՝ ----------Վ.Հայրապետյան
----------Լ.Խաչատրյան
----------Է.Հովհաննիսյան
----------Ա.Արշակյան
քարտուղար՝----------Ա.Ավետիսյան